թերի եւ առանց պատճառի։ Գրուեցաւ ի աշխարհն Վասպուրականի*) եւայլն (Ժե)։

Ներկայացուցիչների ժողովը կամ պարլամենտը միապալատեան է։ Նա ոչ միայն երկրի բարձրագոյն օրէնսդիր հիմնարկութիւնն է, այլ եւ — ինչպէս յիշեցինք — բովանդակ իշխանութեան աղբիւրը։ Նրանից են բղխում եւ վարչական, եւ դատական, եւ զինուորական իշխանութիւնները։ Ուրիշ խօսքով՝ վեհապետ ժողովուրդը, յանձին իր այդ դերագոյն մարմնի, վեհապետօրէն կարգադրում է երկրի ճակատագիրը։

Սրանից էլ բղխում է այն անսահման հեղինակութիւնը, որ ունի հայոց տունը Շահամիրեանի աչքում։ Նրա օրէնքներն ու կարգադրութիւնները անպայման են, կամ ինչպէս ինքն է ասում՝ «Հայոց թագաւոր» (Մէ)։ Ոչ ոք, ոչ մի իշխանութիւն կամ անձնաւորութիւն, չի կարող դէմ գնալ կամ չհնազանդել հայոց տանը։ Դա կը լինէր ըմբոստութիւն կամ անհնազանդութիւն ազգի հանդէպ,— մի բան, որ մեր հեղինակի համար աներեւակայելի է։ Անհնազանդը, թէկուզ ամենաբարձր պաշտօնեան պետութեան մէջ, անմիջապէս հեռացւում է պաշտօնից, շղթայւում–տարւում է բանտ եւ իր յանդգնութեան համար խստօրէն պատժւում դատարանով, անգամ մահուան պատիժ ընդունելով (ճձզ)։ Իսկ նա, ով կը համարձակուի «ապստամբել ընդդէմ տանն եւ օրինացն հայոց», ինքը իր համակիցներով «մահու մեռցի եւ որդիք նոցա մի՛ մտցէ ոչ ոք պաշտօն իշխանութեան մինչեւ եօթ ցեղն սերնդոց» (ճձդ)։

Դժբախտաբար, հեղինակը պարզ կերպով չի պատկերացնում իրան Հայաստանի այդ բարձրագոյն հիմնարկութեան ներքին կազմակերպութիւնն ու գործունէութիւնները — եթէ չասենք որ բաւական աղօտ գաղափար ունի նրանց մասին։ Օրինակի համար, մենք չգիտենք, թէ ո՞վ եւ ի՞նչպէս է բաց անում պարլամենտը1), ո՞վ է ղեկավարում նրա նիստերն ու աշխատանքները, ի՞նչ ձեւով է տարւում գործավարութիւնը, ո՞վ է նրա նախագահը։ Չգիտենք նստաշրջանները ո՞վ է կատարում նա իր աշխատանքները, թէ՞ իր տեւողութեան ընթացքում միշտ բաց է եւ գործում է։ Միայն մի անորոշ օրէնք գոյութիւն ունի այդ մասին, թէ ամէն տարի եւ ամէն ժամանակ կարելի է օրէնք դնել (մլա)։ Ուստի մեզ մնում է յաճախ դիմել ենթադրութիւնների կամ հնարաւորութիւնների օգնութեանը եւ նրանով խնդիրները պարզաբանել։

Որովհետեւ բոլոր կարեւոր պետական պաշտօնները — անդամ զօրքի մէջ սպարապետից սկսած մինչեւ հազարապետը — ընտրւում են ազգային ժողովում եւ նրա անդամներից, կը նշանակի պատգամաւորների մի խոշոր մասը, պաշտօնի բերումով, ցրուած պիտի լինի զանազան քաղաքներում եւ վայրերում, այդպիսով չկարողանալով մասնակցել պարլամենտի նիստերին ու աշխատանքներին։ Այդ իսկ պատճառով պարլամենտի ամենառաջին գործն է՝ ընտրել պատգամաւորների կէսը, այսինքն՝ իւրաքանչիւր երկու «փոխանորդ»ից մէկ– մէկ հոգի պարլամենտական մնայուն աշխատանքների եւ օրէնսդրութեան համար (ժդ, ժթ, խգ)։

Սրանց ընտրութեան ձեւի մասին որեւէ ցուցմունք օրէնքների մէջ չենք գտնում։ Ենթադրելի է սակայն, որ վիճակահանութեամբ պիտի լինի, որովհետեւ Շահամիրեանի սիրած ընտրական եղանակը վիճակահանութիւնն է։ Պաշտօնների համար ընտրուած պատգամաւորները կոչւում են «ի պաշտօն իշխանութեան» ընտրուած կամ «պաշտօնատար ի տանէ հայոց», իսկ պարլամենտական մնայուն աշխատանքների համար ընտրուածները՝ «ի կարգ տանուտէրութեան» կամ «տանուտէր» (ժդ)։

Երկու կարգի տանուտէրեր ունի հեղինակը. վերոյիշեալ սովորական տանուտէրերից

*) Ինչպէս տեսնում էք, Կարբի եւ Եղուարդ գիւղերը, որ Այրարատի մէջ են, հեղինակը դրել է Վասպուրականում. դա պէտք է բացատրել կամ նրանով, որ նա լաւ չգիտէ Հայաստանի աշխարհագրութիւնը եւ կամ, որ իւրաքանչիւր հայ ընտրութիւններին մասնակցում է այն գաւառում, ուր նա ապրում է կամ գտնւում ընտրութիւնների ժամանակ։

1) Շահամիրեանի «Տուն Հայոց»ի համար մենք երբեմն գործ ենք ածում, «պարլամենտ» եւ «ազգ. ժողով» արտայայտութիւնները։